2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

31.03.2017 17:55

Հարգելի՝ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հրավիրում է մասնակցելու **2017 թվականի ապրիլ ամսվա վերապատրաստման դասընթացներին**:

Հաշվի առնելով այն, որ հիմնականում աշխատանքային օրվա ավարտին է դասընթացը լինելու, ՀՀ փաստաբանների պալատը տրամադրելու է Ձեզ սուրճ, թեյ և թեթև սնունդ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը (որևէ դասընթացի հետաձգման կամ տեղի չունենալու դեպքում ՀՀ փաստաբանների պալատը կծանուցի միայն նախապես գրանցված փաստաբաններին):

Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ***Փաստաբանների վերապատրաստման կարգում***, որոնք մասնավորապես ուղղված են հետևյալին՝

1. Փաստաբանները **երկու տարվա ընթացքում առնվազն չորս ժամ** պետք է վերապատրաստվեն «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով, նախկինում նախատեսված **մեկ տարվա փոխարեն:** Ընդ որում, երկու տարվա հաշվարկը սկսվում է 2017 թվականի հունվարի 1-ից:

2. Առցանց ձևով (նախապես տեսաձայնագրված դասը սահմանված կարգով դիտելու միջոցով) վերապատրաստմանը կարող են մասնակցել բոլոր փաստաբանները, սակայն մեկ կիսամյակի համար ոչ ավել 4 (չորս) ժամից, **բացառությամբ նույն կարգի 11-րդ կետում նշված փաստաբանների, ովքեր նախապես դիմում են ներկայացրել պարտադիր վերապատրաստման բոլոր ժամերն առցանց ձևով լրացնելու մասին:**

3. Փաստաբանի դիմումի հիման վրա վերապատրաստման դասընթացներին հավասարեցվում է փաստաբանի կողմից մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակումը, ինչպես նաև գիտաժողովի մասնակցությունը, եթե փաստաբանների պալատի խորհրդի կողմից կազմավորված գիտամեթոդական հանձնաժողովը բավարարել է փաստաբանի դիմումը: Սույն կետում նշված հանձնաժողովը կազմավորվում է երեք փաստաբան անդամից և գործում է երկու տարի ժամկետով:

4. ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության վերապատրաստմանը չմասնակցած նաև՝

- **պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսներին՝ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում.**

- **կարգապահական գործ նախապատրաստող անձանց:**

Բեռնել ժամանակացույցը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
վերապատրաստման հարցերով
համակարգող՝ Անի Ղարիբյան
ani.gharibyan@advocates.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })